Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

  Գագիկ Գրիգորյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Բելգիայի Թագավորություն՝ քաղաք Բրյուսել:

  2017 թվականի սեպտեմբերի 11-ից 13-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Եվրոպական Հանձնաժողով

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

  Մասնակցություն Արևելյան գործընկերության 13-րդ տրանսպորտային պանելին

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպված Արևելյան գործընկերության հերթական 13-րդ տրանսպորտային պանելի ընթացքում հիմնական անդրադարձը կատարվել է Արևելյան գործընկերության երկրների առաջնային ենթակառուցվածքային ծրագրերին, տրանսպորտային հասանելիությանը եվրոպական ցանցին, ճանապարհային անվտանգության հետ կապված խնդիրներին ու մարտահրավերներին, ինչպես նաև տրանսպորտային ցանցի զարգացմանն ուղղված ներդրումային հնարավորություններին:

Հանդիպման ընթացքում բացման խոսքով ելույթ ունեցան շարժունակության և տրանսպորտի վարչության Միջազգային տրանսպորտային հարաբերությունների ոլորտի ղեկավար Ալան Բարոնը, Շարժունակության և տրանսպորտի վարչության միջազգային հարաբերությունների բաժնի պետ Հարվի Ռոուսը և Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության և ԵԱՀԿ բաժնի պետ Բորիս Լարոչեվիտչը:

Որպես Սոֆիայի Տարածաշրջանային տրանսպորտային ներդրումային համաժողովի ընթացքում կայացած քննարկումների շարունակություն՝ Տրանսպորտային պանելի 13-րդ հանդիպման ընթացքում քննարկվել են Արևելյան գործընկերության երկրների TEN-T տրանսպորտային միջանցքի համար նոր և արդեն իսկ գոյություն ունեցող ֆինանսական մեխանիզմների ավելի արդյունավետ օգտագործման հնարավորությունները:

Քննարկվել են նաև այն ծրագրերը, որոնց իրագործումը պահանջում է հնարավորինս կարճ ժամանակահատված և հնարավորություն է տալիս վերջիններիս ավելի հեշտ գտնել ֆինանսավորման աղբյուրներ:

Քննարկումների ընթացքում նշվեց, որ ֆինանսավորման ներկայացվող ծրագրերը պետք է հանդիսանան Տրանս-եվրոպական տրանսպորտային ցանցի մի մաս, համապատասխանեն պետության կողմից վարվող տրանսպորտային քաղաքականությանը և լինեն շարունակական:

Ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորմանն ուղղված քննարկմանը ներկա էին միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչներ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Եվրոպական ներդրումային բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, որոնց ներկայացվեցին այն ծրագրերը, որոնց իրագործման համար անհրաժեշտ է ֆինանսավորում:

Համաշխարհային բանկի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին ներդրումների գործողությունների ծրագիրը, և ճանապարհային անվտանգությունը՝ որպես տարածաշրջանային հիմնական առաջնայնություն:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ճանապարհային անվտանգության խնդիրները, մասնավորապես՝ ճանապարհային վթարների հետևանքով մահացության ցուցանիշների կրճատումը, ճանապարհային անվտանգությամբ զբաղվող համապատասխան մարմնի ստեղծման կարևորությունը, ԵՄ երկրների միջև ճանապարհային անվտանգության

ստանդարտների համապատասխանեցումը և ճանապարհային անվտանգությանն ուղղված անդամ - երկրներում իրականացվող ծրագրերը:

Արևելյան գործընկերության 13-րդ տրանսպորտային պանելի հերթական նիստի ընթացքում քննարկվեց նաև 2017թ. սեպտեմբերի 21-22-ը ք. Տալլինում «Կապակցելով Եվրոպան» խորագրով համաժողովի շրջանակներում կայանալիք Արևելյան գործընկերության տրանսպորտի նախարարների հանդիպման օրակարգը, կայանալիք երկկողմ հանդիպումները, միջոցառման լոգիստիկայի հետ կապված հարցերը, ինչպես նաև նախարարական հանդիպումից ակնկալվող արդյունքները:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Տրանսպորտային պանելի 13-րդ հանդիպման շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գագիկ Գրիգորյանին հնարավորություն ընձեռվեց երկկողմ հանդիպումներ ունենալ Եվրոպական ներդրումային բանկի, Համաշխարհային բանկի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հարցեր՝ կապված Հայաստանի Հանրապետությունում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի և Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման մայրուղու վերականգնման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների հետ, որոնք ընդգրկված են Եվրամիության Արևելյան գործընկերության առաջնային նախագծերի ցանկում և ուղղված են արևելյան տարածաշրջանի տրանսպորտային ցանցերը Եվրամիության տրանսպորտային ցանցերի հետ կապելուն:

Բրյուսելում կայացած այցի ընթացքում հանդիպում է կայացել նաև Շարժունակության և տրանսպորտի վարչության Միջազգային տրանսպորտային հարաբերությունների ոլորտի ղեկավար Ալան Բարոնի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցք ներդրումային և Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ճանապարհի վերականգնման ծրագրերը, որոնք ընդգրկված են Տրանս-Եվրոպական ցանցում որպես Հայաստանի Հանրապետության համար հիմնական ճանապարհներ: Կարևորելով վերոնշյալ ծրագրերի իրականացումը՝ Ալան Բարոնը նշեց, որ Եվրոպական Միության տրանսպորտային

ցանցի (TEN-T) մի մասը կազմող ՀՀ հիմնական ճանապարհները, միանալով վրացական ճանապարհներին, կազմում են ընդհանուր համակարգ՝ դյուրին ելք ապահովելով եվրոպական երկրներից Հայաստանի տարածքով դեպի ասիական երկրներ:

Միջոցառման շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում Սլովենիայի Հանրապետության ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցչի հետ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2017թ. սեպտեմբերի 21-ին ք. Տալլինում կայանալիք Արևելյան գործընկերության տրանսպորտի նախարարների հանդիպման ընթացքում ստորագրել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սլովենիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» համաձայնագիրը, որը պատրաստ է ստորագրման 2016թ.-ից:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

  19.09.2017թ.